ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ «ՓԱՓՈՒԿ» ԵՎ «ԿՈՇՏ» ՈՒԺԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սողոմոնյան Լուսինե
Քաղաքագիտության մագիստրոս

Անվտանգային երաշխիքների ուսումնասիրությունը մարդկության պատմության բոլոր շրջափուլերում վայելել է մեծ արդիականություն: Հարկ է նշել, որ ժամանակի ընթացքում՝ պայմանավորված տեխնոլոգիական առաջընթացով և անվտանգային ընկալումների տեսանկյունից մի շարք կերպափոխումներով, դրանք կրել են զգալի փոփոխություններ: Ուստի, անվտանգության քաղաքականության փոփոխմանը զուգահեռ փոփոխվում են նաև դրանց մշակման մեթոդաբանությունն ու տրամաբանությունը, այսինքն դրանց տրվում է այլ մեկնաբանություն, այլ մոտեցում: Անվտանգությունն ինքնին, որպես հասկացություն՝ բազմաշերտ, լայն ու համընդգրկուն է: Անվտանգության սահմանումը ձևակերպելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել դրա էությունը, ծավալն ու նպատակը: Անվտանգությունը սպառնալիքների դեմ անընդհատական պայքարն է:

Անվտանգության իրավիճակի ձգտումը մարդաբանական հիմնախնդիր է, այն բխում է բնությունից և միայն մարդու մոտ է ստանում և ձևավորում համակարգային բնույթ: 21-րդ դարում ի հայտ եկած նոր բնույթի անվտանգային մարտահրավերները կրկնակի անհրաժեշտություն են ստեղծումանվտանգային մեթոդաբանական ուսումնասիրություններին նոր ուժ և զարկ տալու համար:

Քաղաքակրթության փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչուր ժամանակաշրջան՝ համապատասխան սեփական անվտանգային առանձնահատկությունների ու հնարավորությունների՝ ներհատուկ կերպով է հակազդել արտաքին մարտահրավերներին կամ պաշտպանել սեփական հիմնարար և կենսական շահերը, հնարավոր բոլոր ձևերով անվտանգային երաշխիքներ սահմանել: Ուստի, այս ամենի հանրագումարում անհրաժեշտություն է առաջանում անվտանգային քաղաքականության մեթոդաբանական ուսումնասիրությունների գործընթացների արդիականացմանը:

Անվտանգային համակարգի ուսումնասիրությունն ունի համամարդկային նշանակություն, երբ վճռվում է մի վիճակ, որի արդյունքում մարդկության խաղաղ գոյակցությունն է հաստատվում:

Սրընթաց արագությամբ զարգացող աշխարհում, բարձր տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված՝ մոտեցումների և գործիքակազմի տեսանկյունից, կարող ենք դիտարկել այն դրույթները, որոնք համաժամանակյա բնույթ են կրում և գործածական են մեր օրերում:

Անվտանգային քաղաքականությունը տիպաբանական ձևակերպման տեսանկյունից պահանջում է հստակ մոտեցումների և սկզբունքների համալիր:

Տիպաբանական ձևակերպումների և նպատակայնության տեսանկյունից անվտանգային քաղաքականության իրականացումը դիտարկվում է երկու կերպ. ***կոշտ*** և ***փափուկ*** մոտեցումներ: Փափուկ ուժը՝ որպես արտաքին քաղաքականության ռազմավարության եզրույթի ձև՝ առաջին անգամ օգտագործվել է Հարվարդի համալսարանի պրոֆեսոր՝ Ջոզեֆ Նայի կողմից՝/1934-1990թթ./ 1980-թթ.-ին: Նա նշում է. «Ցանկացած պետության փափուկ ուժի ամբողջական ընկալման համար բավական կարևոր է պատկերացնել, թե ինչ ռեսուրսների վրա է այն հիմնվում: Ջոզեֆ Նայն իր հայեցակարգում անդրադառնում է փափուկ ուժի ռեսուրսներին և առանձնացնում միջազգային հարաբերությունների ոլորտում պետության փափուկ ուժի 3 հիմնական բաղադրիչ՝

1. մշակույթը (երբ այն գրավիչ է մյուսների համար),
2. քաղաքական արժեքները կամ գաղափարախոսությունը (երբ դրանք գործում են և՛ երկրի ներսում, և՛ նրա սահմաններից դուրս),
3. արտաքին քաղաքականությունը (երբ այն դիտվում է լեգիտիմ և ունի բարոյական նկարագիր)»:[1]

Փափուկ ուժի հիմնաքարային դրույթները ենթադրում են ոչ ռազմական մոտեցում: Ոչ ռազմական մոտեցումը հեռացումն է ռազմականից՝ այսինքն այնպիսի գործիքակազմի կիրառություն է ենթադրում, որը հնարավորություն կտա պետություններին միմյանց համար դառնալ հուսալի, գրավիչ և վստահելի՝ առանց ռազմական միջամտության: Նշյալ բաղադրիչները հեշտորեն կարելի է համատեղել

[1] **Nye J.,** Soft Power: The Means to Success in World Politics, 2004, 16 էջ:

նաև մշակութային կապերի ու արժեքների հետ, որոնք անխոչընդոտ կերպով նպաստավոր պայմաններ կստեղծեն միմյանց համար և կդառնան երկխոսությունների կամուրջ: Ռեսուրսային տեսանկյունից փափուկ ուժի կարևորագույն բաղադրիչ է հանդիսանում նաև կրթությունը: Փափուկ ուժի իրականացման մեխանիզմ են հանդիսանում նաև պետության կողմից կարգավորվող այն մարմինները, որոնք զբաղվում են դիվանագիտական կապերի ձևավորմամբ: Օրինակ՝ նախարարությունները՝ /ԱԳՆ/ և այլն, դեսպանները, Նախագահի կամ Վարչապետի /ըստ պետական վարչաձևի/ աշխատակազմը և այլ պետական շրջանակներ:

Հակառակ փափուկ ուժի տրամաբանության, կոշտ ուժի կիրառումն այլ է: Այս դեպքում գործածվում են ավելի ուժային և կոշտ մեթոդներ: Ավանդաբար, միջազգային հարաբերությունների շրջանակներում քաղաքական մտածողության մեջ ընտրված էր կոշտ մեթոդների կիրառությունը: Սա էր հենց գլխավոր պատճառը, որ քաղաքագիտական հանրույթը, գիտնականներն ու հետազոտողները նպատակահարմար գտան «կոշտ» ուժի հին ավանդույթներից անցում կատարելու «փափուկ» ուժին՝ նոր ավանդույթներին: Այս տարանջատումը հիմք պետք է դներ առաջացած ամենատարբեր բնույթի մարտահրավերներն ու խնդիրները /օրինակ՝ տնտեսական, քաղաքական, մշակութային և այլն/ լուծելու ոչ ռազմական ճանապարհով: Կոշտ ուժը իշխանության իրականացման ամենահին ձևն է: Սա ենթադրում է այն գաղափարը, որ պետությունները չէին ճանաչում միմյանց նկատմամբ որևէ գերակա իշխանություն և ողջ ուժը կենտրոնացնում էին ուժային քաղաքականության վրա: «Կոշտ» ուժը ենթադրում է հարկադրական գործողությունների և սպառնալիքների միջոցով հասնել սեփական նպատակներին: Ավանդաբար, կոշտ ուժի չափանիշները եղել են ռազմական ուժի, տնտեսական կայունության և հզորության, բնակչության քանակի, աշխարհագրական սահմանների, բնական ռեսուրսների և այլ հատկորոշիչների տրամաբանության ծիրում:

«Կոշտ» և «փափուկ» ուժերը իշխանության ձևեր են հանդիսանում:

Քաղաքական գործընթացները մշտապես պահանջում են վերլուծական, հետազոտական, քննական տեխնոլոգիաների գործիքակազմ, որի միջոցով էլ հենց վերջինս կայանում է: Այս տեսանկյունից խիստ մեծացել է քաղաքական տեխնոլոգների, վերլուծական կենտ-

ռոնների, քաղաքական գիտությունն ուսումնասիրող գիտնականների, քաղաքագետների և մի շարք այլ ձևաչափերով վերլուծություններ իրականացնողների դերը: Անվտանգային քաղաքականությունը մշակող տիպաբանությունը հիմնված է տվյալ պետության արտաքին և ներքին մարտահրավերները պարունակող և ամփոփող անվտանգային ռիսկերով: Այս համատեքտում մեջբերենք գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տիգրան Քոչարյանի հետևյալ միտքը. «Արդի պայմաններում անվտանգության ինստիտուտի ուսումնասիրման հիմնական մեթոդներն են՝ *համակարգայինը, սոցիալ-մշակութայինը և վարքաբանականը (բիհեվիորիստական):* Անվտանգության հիմնախնդիրների հետազոտության մեթոդի կիրառման գլխավոր խնդիրը այն չափանիշների ընտրությունն է, որոնց հիման վրա կառուցվում է հետազոտության գործընթացը: Քաղաքական գիտության կառուցվածքում անվտանգության ուսումնասիրումը համալիր բնույթ ունի, քանի որ ամբողջացնելով քաղաքական, հանրային ու պետական քաղաքականության արդյունքները՝ կանխատեսումներ են արվում քաղաքական բնագավառում»[2]: Այս մեթոդների առկայությամբ հնարավոր կլինի պահպանել հավասարակշռություն, որպեսզի հաջորդաբար և միասնաբար հնարավոր լինի իրացնել և գործարկել դրանք: Ուստի, նոր մեթոդների առկայությունն առաջ է բերում նոր սկզբունքներ, գործիքակազմ, տրամաբանություն ու մտածողություն: Գիտահետազոտական բոլոր բնագավառներում՝ ի թիվս վերոնշյալ մեթոդների, օգտագործվում են շատերը, քանի որ այն հնարավորություն է տալիս խնդրին ծանոթանալ և ուսումնասիրել խորությամբ և մանրամասն կերպով, որոշել արդյունավետ ու օգտակար լուծումներ: Իրապես, անվտանգային քաղաքականության մեթոդաբանությունը որպես նոր ուսումնասիրվող գիտություն մեծ ճանաչում պետք է գտնի, արմատավորվի և իր տարածումը գտնի բոլոր երկրների անվտանգային քաղաքականությունների մշակման համատեքստում: Յուրաքանչյուր մեթոդի կիրառություն իր արդյունավետությունն արտացոլում է ներդրվելով և գործառնվելով:

Հաշվի առնելով անվտանգային համակարգի բազմաոլորտ կառուցվածքը, անհրաժեշտ է դառնում դրա մեթոդաբանական ուսում-

---

[2] Տե՛ս **Քոչարյան Տ.,** Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմունքների վերաբերյալ դասընթացի, Եր., 2012, 20 էջ:

նասիրության ու հիմնավորվածության պահանջը: Այս բազմաչափությունն ի հայտ է բերում մեթոդաբանությունը՝ որպես առանձին գիտության ճյուղ ուսումնասիրելու: Վերոնշյալ մեթոդների ի հայտ գալուն զուգահեռ կերպափոխվեց նաև քաղաքական մշակույթը, մեթոդաբանությունը, որակապես և տեխնիկապես մեծ փոփոխություններ կրեցին մի շարք սկզբունքներ: Մեջբերենք պրոֆեսոր Քոչարյանի և քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Նարեկ Գրիգորյանի «Ազգային անվտանգության ռազմավարությունների մշակման արդի մեթոդաբանության որոշ հարցեր (ՀՀ օրինակով)» վերտառությամբ հոդվածից մի հատված. «Անվտանգային փաստաթղթերի շարքում առաջին հերթին առանձնանում է Ազգային անվտանգության ռազմավարությունը: Մինչդեռ հենց դրա մշակման փորձը ցույց է տալիս, որ ՀՀ-ում չի ձևավորվել նման մակարդակի փաստաթղթերի կազմման մշակույթը, այլ հակառակը՝ առաջին ռազմավարության մշակման մեթոդաբանությունը ոչ միայն չզարգացվեց և տեղայնացվեց, այլև ի սպառ մերժվեց: Այնինչ, արդի քաղաքական իրադրությունը հրամայաբար պահանջում է, որպեսզի պատշաճ մակարդակով կատարվի անվտանգային հարցերի փաստաթղթավորում, ինչը հնարավորություն է տալիս աստիճանաբար ձևավորելու անվտանգային ռազմավարական փաստաթղթերի մշակման մեր իսկ մշակույթը»[3]: ՀՀ-ում փորձ է արվում անվտանգային կարևորագույն փաստաթղթերում կատարել փոփոխություններ, որոնք ի զորու կլինեն պաշտպանելու Հայաստանի Հանրապետությունն արտաքին մարտահրավերներից և վտանգներից: Օրինակ, ՀՀ 2007թ.-ի փետրվարի 7-ի՝ առաջին անվտանգային ռազմավարությունը[4], որը փոփոխվեց 2020թ-ի հուլիսին[5], բխում էր արդիականացման և վերանայման մի շարք անհրաժեշտություններից: Սակայն, որպես փաստ պետք է արձանագրենք, որ դրական կամ արդյունավետ ազդակներն իրենց օգտակարությամբ ցածր էին, քանի որ հենց նույն հրապարակումից

[3] Հայկական բանակ 1 (107). 2021 https://razmavaraget.files.wordpress.com/2021/07/hb-1-2021.pdf

[4] «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», ՀՀ Նախագահի 2007 թ.-ի փետրվարի 7-ի հմ. ՆՀ-37-Ն հրամանագրի հավելված, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189

[5] «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն. դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում», 2020 հուլիս, https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

ընդամենը 2 ամիս անց սկսվեց հայ-թուրքաադրբեջանական 44-օրյա պատերազմը, իսկ փոփոխված, թարմացված ու ավելի նորացված ազգային անվտանգության ռազմավարության դեպքում պատերազմի վտանգն էապես պետք էր բացառվեր:

Նոր մեթոդների ամրագրման ուսումնասիրությունը հիմնվում է մի շարք գործոնների վրա, ինչպես՝ աշխարհաքաղաքական, քաղաքակրթական, մշակութային, տնտեսական, սոցիալական և այլն: Այս գործոնների հետ մեկտեղ մեծ դերակատարում ունի նաև մարդու, անհատի վարքագիծը: Անվտանգային քաղաքականության մշակման ու ուսումնասիրման հարացույցում որոշում կայացնողն անհատն է, ում գիտական փորձի և կուտակած գիտելիքների արսենալի արդյունքում է որոշվում հասարակության կենսակերպը, բարեկեցությունը, անվտանգային երաշխիքները, կյանքի որակը, պաշտպանվում ազգային պետական շահերը:

Քաղաքականության մեջ կատարվող յուրաքանչյուր քայլ մտավոր կարողության արդյունք է, որն իր ուղիղ արտահայտությունն է գտնում պետության արտաքին և ներքին ուղղություններում: Ճիշտ ընտրված մեթոդի կիրառությունը կարող է նպաստել պետության բարեփոխումներին և դրական առաջընթացին: Անվտանգային քաղաքականության ուսումնաիրությունը, որպես առաջնահերթություն՝ պետության կարևորագույն և առանցքային համակարգերից է, որի ապահովման դեպքում պետությունը հնարավորություն է ունենում զարգացման և կայունության, իսկ կայունությունը կարևորագույն կատեգորիա է, հաստատուն վիճակ, որը պետական ինստիտուտների գործունեության տեսանկյունից ընձեռում է մի շարք հնարավորություններ: Քաղաքական կայունությունը գլխավոր գրավականներից է հանդիսանում երկրում տնտեսական, ռազմական, սոցիալական, մշակութային, կրթական և մի շարք այլ ոլորտներում հեռանկարային և երկարաժամկետ պլանավորմամբ գործունեություն ծավալելու համար: Այս դեպքում, սա ցուցիչ կարող է հանդիսանալ արտաքին մարտահրավերներին պատշաճ կերպով դիմակայելու և չեզոքացնելու տեսանկյունից: Անվտանգային քաղաքականության ճիշտ մեթոդաբանությունը մեծ խթան է հանդիսանում քաղաքական կայունության համար: Քաղաքական կայունությունը մեծ դերակատարում ունի արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործում: Հայտնի է, որ արտաքին և ներքին քաղաքականությունները փոխկա-

պակցված են միմյանց կամ արտաքին քաղաքականությունը արտացոլումն է ներքին քաղաքականության: Ուստի, երկուսի հավասարակշռվածության և փոխկապակցվածության միջոցով կարելի է հասնել քաղաքական կայունության: Որոշումների իրականացման գործընթաքում վճռորոշ նշանակություն ունի ներգրավված մասնագետների համապատասխան որակավորումը, պատրաստվածությունն ու փարձառությունը, վերլուծական միտքը, ռազմավարական և պետականամետ մտածողությունը: Սա բոլոր ժամանակներում է եղել խնդիր, իսկ այսօր, ոլորտի լավագույն մասնագետների ներգրավվածությունը պետական մակարդակով որոշումների կայացման հարցում /decision makers/ դարձել է կենսական նշանակության հարց:

Անդրադարձ կատարենք անվտանգային քաղաքականության «կոշտ» և «փափուկ» մոտեցումներին: Դրանք իրարից տարբերվում են սպառնալիքների նկարագրման չափումներով: Մեթոդաբանության տեսանկյունից ունեն իրարից տարբերվող ուղղվածություններ, որոնք անհամատեղելի ու բացառելի են առաջացած սպառնալիքը կանխելու համատեքստում: Դրանց իրականացումը կատարվում է քաղաքական շրջանակներում: Սակայն, հարկ է ունենալ նշյալ երկու հայեցակարգերով մշակված կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական պլաններ՝ ցանկացած աշխարհաքաղաքական իրադրության փոփոխման դեպքում դրանք կիրառելու համար:

«Ազգային անվտանգության ռազմավարության և առհասարակ բոլոր տեսակի ռազմավարությունների մշակման գործը հենվում է երեք բաղադրիչների, կամ տարրերի, համադրություն վրա. դրանք են միջոցները (means), եղանակը (way), և պահանջվող արդյունքը վերջնանպատակ (desired ends): Ավելին, ԱԱՌ-ի դեպքում առավել կարևոր են համարվում երկու բաղադրիչը՝ ընդհանուր (քաղաքական) նպատակները և հատուկ (կոնկրետացված) նպատակները»[6]: Հետևելով նշյալ մտքին, փաստենք, որ վերոնշյալ ուղղությունները պետք է նպատակային առումով միմյանց խարսխված լինեն և արձանագրվեն իրատեսականության և խորը վերլուծությունների արդյունքում տրվող որոշումների տեսքով: Այս համատքեստում նշենք նաև այն կարևորագույն փաստի մասին, որ ազգային անվտանգության քաղաքականության

[6] Հայկական բանակ 1 (107). 2021, https://razmavaraget.files.wordpress.com/2021/07/hb-1-2021.pdf

մշակման բոլոր որոշումները, որոնք արժանահավատ են իրագործվելու և գործառնվելու, ամրագրվում են պետական բարձրագույն և կարևորագույն փաստաթղթերում՝ ինչպիսիք են անվտանգային դոկտրինները, սահմանադրությունները, ռազմավարությունները և այլն: Դրանք բարձրագույն և հաստատուն իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթեր են, որոնք ամփոփում են պետության անվտանգային հայեցակարգերն ու առանցքային նշանակության դրույթները:

Անվտանգային քաղաքականության մշակման մեթոդի էությունը կայանում է նրանում, որ այն կարողանա ապահովել երկարաժամկետ անվտանգային երաշխավորվածություն: Անվտանգային քաղաքականության մշակման և քննարկման շրջանակը լայն կիրառություն է ձեռք բերել միջազգային հարաբերությունների պրակտիկայում: Այս համատեքստում, ավանդաբար գործածվել են կոշտ մոտեցումներ, քաղաքական տրամաբանության շրջանակներում կիրառվել են ուժային ու կոշտ գործիքակազմ:

Ժամանակակից ընկալումներում անվտանգային երաշխիքները պայմանավորվում են ուժերի հավասարակշռմամբ, ավանդական՝ ռազմականից անցմանը դեպի ոչ ռազմականին: Սա, անխուսափելի էր, որովհետև, քաղաքակրթության զարգացմանը զուգահեռ, անհրաժեշտաբար, կենսական պահանջ է դառնում կրճատել և նվազեցնել ռազմական ուժն ու այն բոլոր միջամտությունները, որոնք կարող են ծանր վնաս հասցնել մարդկությանը, կենսոլորտին և այլ բարձրագույն արժեքների: Այս համատեքստում տեղին է խոսել «Կոպենհագենյան դպրոցի սեկյուրիտիզացիայի տեսության մասին»: Կոպենհագենյան դպրոցի տեսությունը ծագել է Հակամարտությունների և Խաղաղությունների ուսումնասիրությունների ինստիտուտում՝ Կոպենհագեն քաղաքում: Այն ներկայացնում են այնպիսի նշանավոր հեղինակներ՝ ինչպիսիք են բրիտանացի քաղաքագետ, միջազգային հարաբերությունների մասնագետ՝ Բարի Բուզանը/1942-2019թթ./, դանիացի քաղաքագետ, միջազգային հարաբերությունների մասնագետ՝ Օլե Վեվերը/1960թ./, նորվեգացի սոցիոլոգ, խաղաղության և հակամարտությունների ուսումնասիրությունների գիտակարգի հիմնադիր՝ Յոհան Վինսենթ Գալթունգը/1930թ./: Մասնավորեցնենք Բ. Բուզանի տեսակետը, ըստ որի միջազգային անվտանգության ապահովման և անվտանգայնացման ապահովման նոր տեսլականների համատեքստում այն ունի կարևորագույն դերակատարում: Կոպեն-

հագենի դպրոցը որդեգրում է անվտանգության բազմաճյուղային մոտեցում: Այս դպրոցի ստեղծմամբ անվտանգության մոտեցումները հեռանում են ավանդական տեսակետից: Կոպենհագենյան դպրոցը ռազմական խնդիրների վերհանումից բացի, խորացնում և ընդլայնում է անվտանգության հարցերի ուսումնասիրությունը՝ ներառելով ոչ պետական դերակատարներին: Սակայն, անվտանգության այս չափազանց լայն ու համընդգրկուն ընկալումների երկիմաստությունից խուսափելու համար, հարկ է խորը և համապարփակ կերպով ներկայացնել ու դիտարկել վերոգրյալ դպրոցի նշանակությունն ու դերակատարումը միջազգային անվտանգության ապահովման համատեքստում: Հարկ է նշել, որ այս դպրոցի ներկայացուցիչներն անվտանգության ապահովումը դիտարկեցին որպես գոյաբանական բարձրագույն արժեք, վերաիմաստավորեցին ու ներգրավեցին այս կարևորագույն ոլորտի՝ անվտանգային հետազոտությունների մեծ օրակարգ:

«Մշակելով անվտանգության սեփական մոտեցումները, Կոպենհագենյան դպրոցի ներկայացուցիչներն անվտանգայնացման գործընթացը դասակարգեցին 3 փուլի՝ մարտահրավերների, վտանգների բացահայտում, համապատասխան միջոցառումների իրականացում և բացասական հետևանքների կանխում կամ չեզոքացում»[7]: Բ. Բուզանն առանձնացնում է անվտանգության 5 տեսակներ՝ ռազմական, շրջակա միջավայրի, տնտեսական, հասարակական և քաղաքական ոլորտի անվտանգություններ:

Անվտանգային քաղաքականության մշակման մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրությունը ներկայումս իր շուրջն է համախմբել հետազոտողների լայն շրջանակ: Յուրաքանչյուր պետության համար կա մշակված հատուկ անվտանգային քաղաքականություն, որտեղ ամփոփված են «կոշտ» և «փափուկ» մեթոդներից բաղկացած դրույթներ: Պետությունը չպետք է որդեգրի կամ առաջնորդվի նշյալ երկու մեթոդներից միայն մեկով: Ինչպես արդեն նշվեց, հարափոփոխ աշխարհում ամեն պահի փոխվում են մեծ քաղաքականության դերակատարները, փոխվում է պատերազմի բնույթը, փոփոխվում են աշխարհաքաղաքական մի շարք իրողություններ, ինչը ստիպում է մտածել և գործել ավելի շրջահայաց կերպով և մի շարք վարկածներ

[7] **Buzan B., Waver O., Wilde J.** Security: A new framework for analysis. London 1998. // Security studies Security studies: A reader. Ed. By Christopher W. Hughes, Lai New Meng., New York, 2011, 18 p.

հաշվի առնելով, քանի որ տվյալ ժամանակի արդյունավետ ազդեցություն ունեցած մեթոդը շատ շուտ կարող է կորցնել իր ուժն ու դիտարկվել օգտաշատությամբ, որակական և քանակական առումով չափազանց ցածր չափումներում: Այսինքն, «կոշտ» և «փափուկ» մեթոդները պետք է հնարավորություններ ունենան միմյանց փոխլրացնելու:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն վերտառությամբ հոդվածի նշանակությունը, հատկապես մեր օրերում մեծ արդիականություն է վայելում: Կարևորության է արժանի այն հանգամանքը, որ նշված երկու՝ կոշտ և փափուկ անվտանգային մոտեցումները չպետք է իրար մերժեն կամ հակադարձեն, այլ պետք է փոխլրացնեն: Պետական բարձրագույն փաստաթղթերում հստակորեն և սկզբունքորեն ամրագրել անվտանգային այն դրույթները, որոնք արդյունավետ կդիտարկվեն պետության համար: Անվտանգային ռազմավարություններում ամրագրել քաղաքական նպատակները, անվտանգային երաշխիքների իրականացման օգտաշատությամբ բարձր մեթոդները: Անվտանգային քաղաքականության մեթոդաբանության կարևորությունը կայանում է նրանում, որ մշակված մեթոդը այնքան կենսունակ լինի, որ կարողանա կանխատեսի վերահաս վտանգն ու չեզոքացնի դրանք:

Ժամանակակից աշխարհում, սպառնալիքների քանակական և որակական փոխակերպումների համատեքստում, փոփոխության են ենթարկվում անվտանգության ընկալումներն ու մոտեցումները: Անհրաժեշտ է զինվել անվտանգային միջոցառումների այն գործիքակազմով, որն ուժ կունենա ապահովելու պետության կայուն զարգացումն ու երաշխավորված անվտանգությունը:

Բանալի բառեր. անվտանգություն, անվտանգային քաղաքականության մեթոդաբանություն, «փափուկ» և «կոշտ» մոտեցումներ, կառավարում, անվտանգայնացում (securitization), անվտանգային ռիսկեր, Կոպենհագենյան դպրոց:

ПОВЫШЕНИЕ ЭФФЕКТИВНОСТИ ПОЛИТИКИ БЕЗОПАСНОСТИ В УСЛОВИЯХ РЕАЛИЗАЦИИ «МЯГКИХ» И «ЖЕСТКИХ» СИЛ

Согомонян Лусине
Магистр политологии

РЕЗЮМЕ

Значение статьи с таким заголовком, особенно в наши дни, пользуется большой популярностью. Важно подчеркнуть, что упомянутые две: жесткий и мягкий, подходы безопасности не должны противопоставлятся и противоречить друг другу, а должны взаимодополнять. В высших документах государтсва нужно ясно и принципиально установить те концепты безопасности, которые будут высокоэффективными для конкретного государства. В стратегиях безопасности нужно правильно установить политические цели с высокоэффицентыми методами реализации гарантированной безопасности. Важность методологии политики безопасности состоит в том, что изобретённый метод стал настолько жизнеспособным, чтоб было возможно заранее прогнозировать грядущую угрозу, и, соответственно, предоставить возможность нейтрализовать её до того, как она возникнет.

В современном мире, в контексте количественных и качественных трансформаций угроз, меняются восприятие и подходы к безопасности. Для поддержания безопаности, необходимо вооружиться такими инструментами, которые будут чрезвычайно эффективными для обеспечения состояния гарантированной безопасности и стабильного развития государства.

Ключевые слова: безопасность, методология политики безопасности, "жесткий" и "мягкий" системный подход, управление, секьюритизация, риски безопасности, Копенгагенская школа.

INCREASING THE EFFECTIVENESS OF THE SECURITY POLICY IN THE CONTEXT OF THE IMPLEMENTATION OF "SOFT" AND "HARD" POWERS

Soghomonyan Lusine
MD in Political Science

SUMMARY

The significance of the scientific article is very modern especially nowadays. It is more important to maintain that to emphasized hard and soft approaches could not reject one another, but should complement each other. In the high level of the strategic documents of the state, it is particularly important to fix the security provisions that will be considered as effective implementations in the context of the state's activaty. In the security starategic documents it is more important to fix the political goals and effective methods that are insuring the state's security. The importance of the methodology's security policy is to predict and eliminate possible threat or danger. In the modern world quantitive and qualitive transformation of threats claim to change perceptions and approaches of security concept. It is necessary to have respective resourses that will powerful to insure the stable development of the state and will provide security.

Key words: security, security policy methodology, "hard" and "soft" systems approach, management, securitization, security risks, Copenhagen School.